ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
№ 5, 1944

Ս. ԳՈՒՆԱՐՅԱՆ, Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍՍԲՈՍ ՇԱՀԱԶԻԶԻ ԱՐԽԻՎԻՑ

Ամբաստ Շահազիզի գրական արխիվի ամենաարժեքավոր մասը կազմում են նրա նամակները։ Շահազիզի հայրենասիրությունն արտահայտվել է ոչ միայն բնաբերգական բանաստեղծությունների մեջ, նրա քաղաքացիական պոեզիայում, այլև այն բազմաթիվ անտիպ նամակներում, որ նա գրել է Պոլսի պատրիարք Մաղաքիա Օրմանյանին, Գրիգոր Խալաթյանին, բանաստեղծ Խաչատուր Հովհաննիսյանին (Փյունիկ Հովհաննիսյան) և այլն։

Օրմանյանին գրած նամակները հարուստ են 1897—98 թթ. Տաճկահայաստանում տեղի ունեցած՝ հայ ժողովրդի կոտորածին վերաբերող արձագանգներով։ Ժամանակակից լինելով հայ ժողովրդի կրած անօրինակ տանջանքներին, նա չբավականացավ միայն «Օղնեցեք» ազիտացիոն բնույթ կրող բանաստեղծությունը գրելով, այլև կարողացավ կազմակերպել նյութական օգնություն աղետյալներին։

Արիժան Հայրիկին գրած իր անթվակիր նամակում Շահազիզը գայրույթով է խոսում տաճկահայ կոտորածի և մեծ պետությունների՝ դեպի հայ ժողովուրդն ունեցած անտարբեր, ոչ մարդասիրական վերաբերմունքի մասին։

Օգոստոսի 5-ին (1898 թ.) Խաչատուր Հովհաննիսյանին գրած նամակում Շահազիզը հայտնում է Բիսմարկի մահը։ Այս կապակցությամբ նա հիշում է նրա ֆարդարար քաղաքականությունը դեպի մանր ժողովուրդները, դեպի հայ ժողովուրդը, հիշում է Բիսմարկի 1862 թ. արտասանած խոսքերը այն մասին, թե ժամանակի մեծ հարցերը որոշվում են ոչ թե ճառերով ու որոշումներով, այլ երկաթով ու արյունով։

Շահազիզը իր այդ նամակում գայրույթով է խոսում Բիսմարկի, գերմանական պետության և նրա դիվանագիտության մասին։

Մասին հրապարակում ենք Շահազիզի՝ Խաչատուր Հովհաննիսյանին գրած այդ արժեքավոր նամակից մի հատված։

ԻՄ ԱԶՆԻՎ ԲԱՐԵԿԱՄ
ԽՐԻՍՏԱՖՈՐ ԻՎԱՆՈՎԻՉ,

Դարիս էլեքտրական արագաշարժությամբ դուք կատարեցիք փոխադրության գործը և շատ լավ արիք.—խորին շնորհակալություն։ Այստեղ եղանակը բարեխառն է. ես վատ չեմ, թեև պաղամսկան հիվանդություն չի թողնում և հավատարիմ շան պես հետս է։ Ծանոթներ բավական կան, որոնց հետ երբեմն զրոսնում եմ և որոնցից երբեմն էլ խուսափում, բազմաթոչ ալիքներին ենթարկվելով, քան թե մարդկային զրախոսություններին։

Ընդհանուր նորությունների շարքից խոսելով,—մի մարդ, որ արյան և երակների կշռքով կշռեց ժամանակակից քաղաքակրթությունը, հեռացավ մեր սրտից, միայն ոչ դեպի հավիտենական հանգիստ, այլ դեպի հավիտենական նզովք. այդ գերմանացի պատգամախոս Ֆիսմարկն է։ Արդարև, որքան ոսկորներ ու մեռելների կմախքներ թողեց դա աշխարհի վրա. որքան անբարոյականացրեց դա Գերմանիայի կառավարիչներին, որ դոքա փայփայեցին մի վայրենի ժողովուրդ, երբ նրանք հարձակվում էին անմեղների վրա և լույս ցերեկով մորթում իրենց ներկայացուցչի առջև։ Անբարոյական մարդիկ, անբարոյական գերմանական դիպլոմատիա, որ այնքան ավելի բերիք մեր խեղճ հայրենիքի գլխին։—Էհ, եղբայր, ինչու մեր նանիր ցավերը նորոգենք, մենք ամենաթշվառ սերունդ ենք, որ աչքով տեսանք մեր սրբավայրի պղծությունը և անզոր ենք օգնելու նրան։

Մնաք բարով

անձնվեր Ս. Հահագիզյան

5 օգոստոսի [1898 թ.]

Նամակն անթվակիր է. նամակի տարեթիվը վերականգնում ենք Ֆիսմարկի մահվան թվականով։

Արփ. Ավետիսյան